ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ
THE PATRIARCH OF ARMENIAN ART-HISTORICAL MEDIEVAL STUDIES
ПАТРИАРХ АРМЯНСКОЙ ИСКУССТВОВЕДЧЕСКОЙ МЕДИЕВИСТИКИ

Լրացան Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Մատենադարանի ավագ գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ծննդյան 95-ամյա և գիտաստեղծագործական գործունեության 65-ամյա հոբելյանները: Հ. Հակոբյանի կյանքի ճանապարհն արգասավորվել է գիտական, մանկավարժական ու հասարակական բեղուն և արդյունաշատ գործունեությամբ:

1959 թվականին, ավարտելով ԵՊՀ պատմության ֆակուլտետը, Հ. Հակոբյանն աշխատանքի է անցել Մատենադարանում, որի հետ էլ անխզելիորեն կապվեցին երիտասարդ հետազոտողի գիտաստեղծագործական կյանքի հետագա բեղմնավոր տասնամյակները: Այդ օրվանից ի վեր նրա ողջ գիտական ուղին անցել ու շարունակվում է Մատենադարանի նվիրական հարկի ներքո՝ անգին ձեռագրերի խորհրդավոր ու ոգեշնչող աշխարհում:

Եվ միանգամայն օրինաչափ էր, որ տարիների ընթացքում Հ. Հակոբյանն իր ծանրակշիռ ավանդը պիտի բերեր հայ կերպարվեստի, մասնավորապես՝ միջնադարյան մանրանկարչության ուսումնասիրության գործում, և իր հիմնարար աշխատություններով իրավամբ դառնար հայ միջնադարյան արվեստաբանության հաստատուն հենասյուներից մեկն ու Մատենադարանի արվեստաբանական իսկական խորհրդանիշը:

Անուրանալի է միջնադարագետ-հայագետի ավանդը պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների ձեռագիր մատյանների ուսումնասիրության գործում: Նրա բազմամյա հետազոտությունների հանրագումարը դարձան «Վասպուրականի մանրանկարչությունը» երկհատոր մոնումենտալ աշխատությունը (1976, 1982), «Миниатюра Васпуракана (XIII–XV вв.)» մենագրությունը (1989), «Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում» ալբոմը (1997), «Խիզանի մանրանկարչության արվեստանոցը» գիրքը (2026) և գիտական բազմաթիվ հոդվածները: Հ. Հակոբյանն առաջին անգամ համակողմանիորեն քննության առավ Վասպուրականի մանրանկարչությունն իր բոլոր դպրոցներով (Աղթամար, Ոստան, Բերկրի, Վան, Խիզան և այլն): Գիտական շրջանառության մեջ դրվեցին մինչ այդ ան-

հայտ տասնյակ տաղանդավոր ծաղկողների անուններ, բացահայտվեցին այդ ինքնատիպ դպրոցների ու դրանց վառ ներկայացուցիչների ստեղծագործական ոճն ու գեղարվեստական-պատկերագրական առանձնահատկությունները:

Անուրանալի է գիտնականի ավանդն Արցախի և Ուտիքի մանրանկարչության ուսումնասիրման գործում ևս: «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII–XIV դարերում» եռալեզու արժեքավոր աշխատությամբ (1989) նա հայկական մատենական նկարչության պատմության մեջ հաստատեց այդ ինքնատիպ դպրոցի գոյությունը՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք հազվագյուտ ձեռագրեր:

Հայկական սրբապատկերի քննության ասպարեզում գիտական լուրջ նվաճում դարձավ միջնադարյան արվեստի պատմության համար անկյունաքարային նշանակություն ունեցող «Հայոց տերունական սրբապատկերները» (2003) գիտաուսումնական կոթողային աշխատությունը, որտեղ համակողմանիորեն վերլուծել է Հիսուս Քրիստոսի, Սուրբ Խաչի և Սուրբ Աստվածամոր պատկերները, ներկայացրել քրիստոնեական պատկերագրության սկզբնավորումը, ինչպես նաև պատմական վկայությունների, ավանդության ու եկեղեցական ծեսի քննությամբ բացահայտել այն գաղափարական հենքը, որի վրա վերընձյուղվեց ու զարգացավ հայկական սրբապատկերը:

Անուրանալի է Հ. Հակոբյանի ավանդը նաև բարձրագույն կրթության ասպարեզում, և մեծարժեք՝ գիտնական-մանկավարժի նրա վաստակը երիտասարդ կադրերի պատրաստման ու կրթման նվիրական գործում: Նրա անմիջական գիտական ղեկավարությամբ ու հոգատար առաջնորդությամբ կյանքի ուղեգիր են ստացել և պաշտպանվել թեկնածուական բազմաթիվ ատենախոսություններ՝ արվեստաբանության և մանկավարժության ոլորտներում:

Հատկապես ցանկանում ենք ընդգծել Հ. Հակոբյանի գիտաստեղծագործական սերտ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ, որը սկիզբ է առել տասնամյակների հեռվից: Նա ակտիվորեն մասնակցել է ինստիտուտի կազմակերպած՝ հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ (Երևան, 1978), երրորդ (Իտալիա, 1981) և չորրորդ (Երևան, 1985) գիտաժողովների աշխատանքներին: 2003 թվականից ի վեր Հ. Հակոբյանն Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի հրավիրված անդամ է, իսկ գիտական աստիճանաշնորհման Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի աշխատանքներին իր անփոխարինելի մասնակցությունն է բերել դեռևս դրա ստեղծման օրից՝ 1996 թվականից:

Առանձնակի ուշադրության է արժանի Հ. Հակոբյանի գիտական արդյունաշատ համագործակցությունն Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի երկարամյա վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի հետ: Այդ համատեղ ստեղծագործական համագործակցության արդյունքը դարձան «Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն» (2012) և «Հայկական մանրանկարչություն. սկզբնավորումն ու զարգացման ընթացքը» (2019) արժեքավոր աշխատությունները: Իսկ դրանից տա-

րիներ առաջ՝ 2009 թվականին, լույս էր տեսել Արարատ Աղասյանի, Մուրադ Հասրաթյանի, Վիգեն Ղազարյանի և Հրավարդ Հակոբյանի համահեղինակությամբ «Հայ արվեստի պատմություն» կոթողային գիրքը (2009), որի համար հեղինակային խումբն արժանացավ ՀՀ պետական մրցանակի:

Ի սրտե շնորհավորելով մեր գործընկերոջ՝ հայ արվեստաբանական միջնադարագիտության պատրիարքի փառապանծ հոբելյանը, մաղթում ենք արևշատություն, անսպառ կենսական կորով ու անսասան լավատեսություն: Թող կյանքի հետագա տարիները լինեն խաղաղ ու բարեբեր և նշանավորվեն գիտաստեղծագործական նորանոր խիզախումներով ու ձեռքբերումներով՝ հանուն հայ արվեստաբանության հարատևման և ի նպաստ հայագիտության հաղթական առաջընթացի:

Աննա Ասատրյան
Anna Asatryan
Анна Асатрян

Արվեստի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Arts, National Academy of Sciences, Armenia
Институт искусств, Национальная академия наук, Армения

Արարատ Աղասյան
Ararat Aghasyan
Арарат Агасян

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Corresponding Member of the NAS RA
Член-корреспондент НАН РА

Արվեստի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Arts, National Academy of Sciences, Armenia
Институт искусств, Национальная академия наук, Армения

anna.asatryan@arts.sci.am

DOI: 10.53548/0320-8117-2026.2-320